# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## N ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-2021-ԱՎՎ/ԱՆՁ-25
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<20>>12 . 2021թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և **□Լեհական Արժեթղթերի արտադրամաս□ ԲԸ-ն** ի դեմս վաճառքի տնօրեն **Մ.Սադեցկայի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 21.04.2021թ.-ին կնքված **ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-2021-ԱՎՎ/ԱՆՁ-25** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-2021-ԱՎՎ/ԱՆՁ-25** ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով (19.01.2022թ.):

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է ( 1 ) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

**ՀՀոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**Աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011021947**
**ՀՎՀՀ 01533334**
**հեռ. 010 59-68-57**
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru

**Վ. Մովսիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Sales Director
Marzena Sadecka

POLISH SECURITY PRINTING WORKS
POLSKA WYTWÓRNIA
PAPIERÓW WARTOŚCIOWYCH S.A.
1 Sanguszki Str.,00-222 Warsaw, Poland
EU VAT No PL 525 000 10 90